ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Արթուր Պողոսյան

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), դեկտեմբերի 11-13-ը, 2017 թ.

- **ՆՊԱՏԱԿԸ**

  - ✓ *Մասնակցություն ԱՊՀ անդամ պետությունների գիտական և ստեղծագործական մտավորականության XII համաժողովին*
  - ✓ *Մասնակցություն ՀՀԽ (Հումանիտար համագործակցության խորհուրդ) և ՀՀՄՀ (Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամ) վարչության համատեղ նիստին:*

2017 թվականի դեկտեմբերի 11-13-ը, որպես հայաստանյան պատվիրակության ղեկավար, մեկնել էի Մոսկվա:

Հայաստանյան պատվիրակության կազմում էին՝ ԱՊՀ Հումանիտար համագործակցության խորհրդի անդամ, ՀՀ Նախագահի միջազգային մշակութային-հումանիտար համագործակցության հարցերով խորհրդական Արմեն Սմբատյանը, Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ Անահիտ Մնացականյանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ Ռոբերտ Խաչատրյանը, Երևանի թատրոնի և կինոյի

պետական ինստիտուտի պրոռեկտոր Վահան Եղիազարյանը, Երևանի Կ. Ստանի-սլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի տնօրեն Ֆրեդերիկ Դավթյանը, Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, Հայաստանի ռուսական արվեստի թանգարանի տնօրեն Մարինե Մկրտչյանը, Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ Նարա Շլեպչյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնա-մուրային ֆակուլտետի դեկան Արմեն Բաբախանյանը, քանոնահար, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր Էթերի Հովհաննիսյանը, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության լրատվական խումբը (լրագրող՝ Անահիտ Հովհաննիսյան և օպերատոր՝ Աշոտ Խաչատրյան):

Այցիս առաջին օրը՝ դեկտեմբերի 11-ին, մասնակցեցի ԱՊՀ երկրների ստեղծագործական և գիտական մտավորականության հոբելյանական XII համաժողովին: Համաժողովը, որն անց էր կացվում «Հումանիտար համագործակցության դերը ԱՊՀ երկրների ընտանեկան արժեքների և ավանդույթների ամրապնդման գործում» խորագրով, բացեց Ռուսաստանի փոխվարչապետ Օլգա Գոլոդեցը: Ողջունելով կազմակերպիչներին և մասնակիցներին՝ նա ընթերցեց ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինի ուղերձը: Բացման արարողության ժամանակ մասնակիցներին ողջունեցի նաև ես՝ ընթերցելով Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը: ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ, գործադիր քարտուղար Սերգեյ Լեբեդևի ուղերձը համաժողովում ընթերցեց ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ, գործադիր քարտուղարի տեղակալ Կոնիսբեկ Ժու-սուպբեկովը: Ողջույնի խոսքով հանդես եկան մասնակից երկրների (Ադրբեջանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Մոլդովայի, Ղրղզստանի և Ռուսաստանի) պատվիրակությունների ղեկավարները:

Այնուհետև տեղի ունեցավ «Համագործակցության աստղեր» մրցանա-կաբաշխությունը: Մրցանակաբաշխությանը ներկայացվել էր 12 թեկնածություն, և ժյուրին քվեարկության արդյունքում ընտրել էր 8 լավագույնների Ադրբեջանից, Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Մոլդովայից, Ռուսաստանից, Տաջիկ-

ստանից: Հայաստանից «Մշակույթի բնագավառում ունեցած զգալի ավանդի համար» անվանակարգում մրցանակի արժանացավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը:

Համաժողովի ընթացքում տեղի ունեցավ նաև 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք Գորիսի (Հայաստան) շնորհանդեսը, որը բաղկացած էր 4 մասից: Շնորհանդեսը ողջույնի խոսքով բացեց Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանը: Շնորհակալություն հայտնելով ԱՊՀ երկրների ՀՀՄՀ գործադիր ղեկավարությանը՝ փոխհամայնքապետը կարևորեց 2018 թ. անցկացվելիք բազմաբնույթ միջոցառումների պատշաճ իրականացումը և ԱՊՀ երկրների մշակույթի գործիչներին ու ստեղծագործական կոլեկտիվներին հրավիրեց Գորիս:

Այնուհետև Գորիսի հարուստ բնության և պատմամշակութային ժառանգության մասին գովազդային ֆիլմ ցուցադրվեց, որը շարունակվեց ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի գլխավոր մասնագետ Ա. Մնացականյանի «Գորիսը՝ 2018 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի տեսաներկայացումով:

Շնորհանդեսն ավարտվեց քանոնահար Էթերի Հովհաննիսյանի հիասքանչ կատարմամբ:

Կարճատև ընդմիջումից հետո սկսվեց պլենար նիստը: Նիստի ընթացքում, որը վարում էր ՌԴ Նախագահի միջազգային մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկոյը, քննարկվեցին ԱՊՀ երկրների ընտանեկան ինստիտուտների, ընտանեկան արժեքների և ավանդույթների ամրապնդմանն ուղղված հումանիտար համագործակցության զարգացմանն առնչվող օգտակար փորձառությունները, խնդրահարույց կետերը, նոր հնարավորությունները:

Պլենար նիստին հանդես եկա որպես հիմնական զեկուցող:

Նույն օրը երեկոյան մասնակցեցի «Շելկունչիկ» պատանի երաժիշտների դասական երաժշտության միջազգային փառատոնին:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 12-ին՝ համաժողովը շարունակեց իր աշխատանքը 4 թեմատիկ սեկցիաներով՝ «ԱՊՀ անդամ պետությունների համագործակցությունը

կրթության և գիտության ոլորտում», «Հումանիտար համագործակցության եվրասիական բանալին», «ԱՊՀ-ում մշակույթի տարվանն ընդառաջ», «Աջակցություն ԱՊՀ երկրների ապագա սերունդներին»: Մասնակիցների ընդհանուր քանակը կազմում էր շուրջ 200 մարդ:

Հայկական պատվիրակությունը, որը հավասարապես ներկայացված էր բոլոր սեկցիաներում, առանձնանում էր իր ակտիվությամբ:

Նույն օրը կայացավ Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի վարչության (ՀՀՄՀ) և Հումանիտար համագործակցության խորհրդի (ՀՀԽ) համատեղ նիստը: Նիստը վարում էր ՀՀՄՀ վարչության նախագահ Փոլադ Բյուլբյուլօղլին: Նիստին մասնակցում էին ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ անդամներ, ԱՊՀ Գործադիր կոմիտեի նախագահ, Գործադիր քարտուղարի տեղակալ Կոնիսբեկ Ժուսուպբեկովը:

Օրակարգում ներկայացված էր 10 հարց:

ԱՊՀ Հումանիտար համագործակցության խորհրդի անդամ, ՀՀ Նախագահի միջազգային մշակութային հումանիտար համագործակցության հարցերով խորհրդական Արմեն Սմբատյանը առաջարկեց օրակարգում ընդգրկել 1 լրացուցիչ առաջարկ՝ ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության հիմնադրամին՝ 2017-2018թթ. ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության առաջնահերթ միջոցառումների նախագծի շրջանակներում նախատեսված Երևանում կայանալիք «ԱՊՀ երկրների գիտնականների համաժողովի» հայտը ներառել ՀՀՄՀ 2018 թ. ծրագրերի ցանկում: Առաջարկությունն ընդունվեց (համաձայն ՀՀՄՀ գործող կանոնակարգի որոշվեց առաջարկը ներկայացնել ՀՀՄՀ մասնակից երկրների հաստատմանը), որից հետո միաձայն հաստատվեց նիստի օրակարգը:

Օրակարգի 2-րդ հարցը ՀՀԽ անհատական և ՀՀՄՀ խորհրդի կազմի փոփոխությունների մասին էր՝ Ղրղզստանի Հանրապետությունից Ղրղզստանի մշակույթի, տեղեկատվության և զբոսաշրջության նախարար նշանակված Սուլթանբեկ Ժուամագուլովին, Բելառուսի Հանրապետությունից Բելառուսի տեղեկատվության նախարար Ալեքսանդր Կարլյուկևիչին ընդգրեկել ՀՀԽ անհատական կազմում, իսկ

Բելառուսի Հանրապետության մշակույթի նախարար Յուրի Բոնդարին՝ ՀՀՄՀ խորհրդի կազմում:

Օրակարգի 3-րդ հարցով Տաջիկստանի Հանրապետության Նախագահի սոցիալական զարգացման և հասարակայնության հետ կապերի հարցերով օգնական Ռահմոնզոդա Աբդուջաբբորը ընտրվեց ՀՀԽ նախագահ, ՀՀՄՀ Գործադիր տնօրեն Անատոլի Իկսանովը ևս 4 տարով հաստատվեց իր պաշտոնում:

Օրակարգի 4-7-րդ հարցերի վերաբերյալ (ՀՀՄՀ 2016-2017 թթ. գործունեության, ՀՀՄՀ գործունեության օրենսդրական կանոնակարգման, ՀՀՄՀ 2016 թ. ֆինանսատնտեսական գործունեության մոնիտորինգի, հանձնարարականների կատարման մասին, Հոգաբարձուների խորհրդի կանոնակարգի նոր խմբագրության հաստատման մասին) զեկուցեց ՀՀՄՀ Գործադիր տնօրեն Անատոլի Իկսանովը:

Նա տեղեկացրեց, որ մշտապես խնդիր կա Գործադիր տնօրինության պահպանման ծախսերը հոգալու հարցում՝ կապված անդամ երկրների մի մասի կողմից անդամավճարները դադարեցնելու (Բելառուս) կամ չվճարելու հետ (Ղրղզստան, Ուզբեկստան):

Գործադիր տնօրենը ներկայացրեց նաև ՀՀՄՀ 2017 թ. կատարված աշխատանքները, տեղեկացրեց, որ այս տարվա ծրագրերի իրականացման պատկերը գոհացնող է: Միաժամանակ հայտնեց, որ հաստատվել է 2018 թ. Ծրագիրը՝ և նամակներ են առաքվել երկրներին՝ 2019 թ. ծրագիրը ձևավորելու նպատակով հայտեր ստանալու առաջարկությամբ: Նա նաև հիշեցրեց, որ հայտերի ստացման վերջնաժամկետը 2018 թ. փետրվար ամիսն է:

Ա. Իկսանովը խնդրեց նաև աշխատանքային կարգով հաստատել «Համագործակցության դեբյուտներ» մրցանակաբաշխության արդյունքները:

Նիստի մասնակիցները հաստատեցին 2018 թվականին ՀՀՄՀ-ի 2016-2017 թթ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգում (օրակարգի 7-րդ հարց) անցկացնելու հարցը, ապա ի գիտություն ընդունեցին հանձնարարականների կատարման մասին (օրակարգի 8-րդ հարց) տեղեկույթը:

Օրակարգի 9-րդ հարցի վերաբերյալ, որտեղ ներառված էին այլ հարցերի քննարկումները, խոսեց ՌԴ Նախագահի հումանիտար հարցերով հատուկ խորհրդական Միխայիլ Շվիդկոյը: Նա կարևորեց միասնական մեդիա դաշտի ստեղծումը: Անդրադառնալով արդեն իսկ գոյություն ունեցող «Միր» հեռուստաընկերությանը՝ Մ. Շվիդկոյը ընդգծեց, որ կարևոր է ակտիվացնել ՀՀՄՀ և ՀՀԽ գործունեության լուսաբանումը:

Օրակարգի եզրափակիչ հարցը վերաբերում էր ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ հերթական նիստին: ՀՀՄՀ փոխնախագահ Միխայիլ Շվիդկոյը առաջարկեց նիստն անցկացնել 2018 թ. գարնանը Մոսկվայում:

ԱՊՀ երկրների ստեղծագործական և գիտական մտավորականության համաժողովն ավարտեց իր աշխատանքները դեկտեմբերի 12-ին: Ընդունվեց համաժողովի եզրափակիչ փաստաթուղթը: Համաժողովի անցկացման վայրն ու ժամկետները կհստակեցվեն ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ հերթական համատեղ նիստի ժամանակ:

Ս. թ. դեկտեմբերի 13-ին վերադարձա երևան:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱՊՀ երկրների ստեղծագործական և գիտական մտավորականության համաժողովի՝

1. Հայաստանյան պատվիրակությունը մասնակցեց համաժողովի աշխատանքներին:
2. Կայացավ «Գորիսը՝ 2018 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շնորհանդեսը:
3. ՀՀ ժողովրդական արտիստ Տիգրան Մանսուրյանն արժանացավ «Համագործակցության աստղեր» մրցանակին:

ՀՀՄՀ վարչության և ՀՀԽ համատեղ նիստի՝

1. Հաստատվեց «Գորիսը՝ 2018 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի ՀՀՄՀ բյուջեով ֆինանսավորման հայտը:
2. Ընդունվեց ՀՀՄՀ 2017 թ. կատարված աշխատանքի մասին հաշվետվությունը, հաստատվեց 2018 թ. ՀՀՄՀ ծրագրային պլանը:
3. Որոշվեց 2019 թ. ծրագրային հայտերը ՀՀՄՀ Գործադիր տնօրինություն ներկայացնել մինչև 2018 թ. փետրվար ամիսը:
4. Հաստատվեցին ՀՀՄՀ 2017 թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքները, ի գիտություն ընդունվեց հանձնարարականների կատարման մասին տեղեկույթը:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆ